

The content and essence of this phenomenon is revealed in the article. It is proved that dragging as means of revelation and prevention of crimes and sentence is Zoroastrian. It was provided and applied in the Armenian Zoroastrian Law System with a number of sentences and means of prevention of crimes. Gregory the Illuminator changed it and inserted in the Armenian Christian Law System which was created by him.

ԱՆՀՈՒՍՈՒԹԵԱՄԲ ԼԱՑՈՒԿՈՑ ԱՆԵԼՆ ՈՒ ՑՏԵԼԸ ՈՐՊԵՍ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄ

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

Անհուսութեամբ լացուկոժ անելն ու ցտելն արգելող նորմ է, որն իր արտահայտությունն է գտել «Հաճախապատում ճառքի» «ԺԲ» ճառի 38 տանը: Մինչ այժմ փորձ չի արվել քննության ու վերլուծության ենթարկելու այդ ճառերում արտահայտված այս կամ այլ նորմերը, պարզել դրանց ծագումնաբանությունը, նշանակությունն ու իմաստը: Նշավակման ենթակա են Մ. Աբեղյանի, Ա. Մկրտչյանի աշխատություններում և այլ աղբյուրներում առկա «Հաճախապատում ճառքի» «վերլուծության» փորձերը և արված հետևությունները, որոնց արդյունքում անհիմն կերպով այս ճառերը վերագրվել են Մեսրոպ Մաշտոցին¹: Ա. Առաքելյանն էլ, ով մի հսկայածավալ գիրք է նվիրել «հայ մտավոր մշակույթի զարգացմանը»՝ ուշադրության չի էլ արժանացրել Գր. Լուսավորչին ու այս ճառերին, որոնք հանդիսանում են այդ մշակույթի ամենակատարյալ դրսևորումներից մեկը²: Այս և այլ հետազոտողների կողմից չի արժևորվել ճառերի գրական, պատմական, աստվածաբանական, փիլիսոփայական և իրավաբանական-բարոյագիտական նշանակությունը, դրանց դերը տիեզերական եկեղեցու, հայկական քրիստոնեական պետության, նրա իրավական սիստեմի (համակարգի) և ամբողջ քրիստոնեական քաղաքակրթության կայացման գործում:

¹ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն, վեց հատորից, Հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ իրատ., 1944, էջ 117-126: **Աշոտ Մկրտչյան**, Հինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, 1968, էջ 112-135; Видные деятели армянской культуры, Ереван, изд. Ергосунта, 1982, էջ 7-18:

² Տե՛ս **Առաքելյան Ա. Գ.**, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն /1-ին դար մ.թ.ա. – 14-րդ դար/, Երևան, «Հայպետհրատ», 1959:

Գր. Լուսավորչի կանոններն³ էլ հայոց պատմության ու գրականագիտության մեջ որակվել են որպես սոսկ նրան «վերագրվող» և ոչ թե նրա գրած: Այնինչ ճառերի հետ դրանց մակերեսային համեմատությունն անգամ ցույց է տալիս, որ դրանց ստեղծողը նույն անձն է՝ Գր. Լուսավորիչը և չեր կարող լինել մեկ այլ անձ, այդ թվում՝ Մ. Մաշտոցը: Իսկ այս հուշարձաններն էլ իրականում հայկական հնագույն իրավունքի՝ և՛ զրադաշտական, և՛ քրիստոնեական, ճանաչման ամենախիսկական աղբյուրներ են:

«Չաճախապատում ճառքում» անհուսորեն լաց ու կոծը և ցտելը դիտվում է որպես ծանր հանցագործություն: Դրա «ԺԲ» ճառի 38–41 տներում ասված է. «Ի վերայ այսոցիկ հաւատացելոց եւ արժանաւորաց յուսոյ, որ **անյուսութեանքն լան եւ կոծին եւ ցտին** զիրաժարեալսն յերկրէս որպէս զհեթանոսս՝ որ ոչ գոյ յոյս, բարկացուցանեն զԱստուած: Եւ ի գործոց երախտեաց բարեացն որ ընծայեցաւն Աստուծոյ վասն իրաժարելոյն, զրկեն այնուիկ զնա ի հանգստենէն, եւ տրտմեցուցանեն զգաւրս երկնաւորս եւ գիոգիս արդարոց, եւ զնոցին զհոգիսն իսկ՝ վասն որոյ զսուզն **յերկարեն**: Եւ ինքեանք անկանին ի պատիժս վասն անյուսութեանն, եւ առնուն զվճիռս պատուհասիցն: Զի որ խռովեցուցանէ զԱստուած եւ տրտմեցուցանէ զերկնային զաւրսն եւ զարդարոցն հոգիս եւ զրկէ զհոգի հանգուցելոյն ի հանգստենէն, կրեսցէ դատաստան ոչ ոք եւ իցե»⁴:

Այսպիսով, հանցագործություն է համարվում մահացած մարդու հուղարկավորության ժամանակ 1. անհուսությամբ լացելը, 2. անհուսությամբ կոծելը, 3. անհուսությամբ ցտելը՝ ինչպես աշխարհից հրաժարված (այլևս ապրել չցանկացող – Ս. Խ.) հեթանոսները: Նման արարքը կատարողին էլ սպասում են ոչ միայն սարսափելի պատիժներ երկրում, այլև դժոխքի պատիժներ հանդերձյալ կյանքում: Այստեղից էլ հարց է ծագում, թե ինչու՞ է նման նորմ, որը բացակայում է Աստվածաշնչում, տեղ գտել քրիստոնեական ամենաառաջին և ամենամեծ փիլիսոփա-աստվածաբանի, իրավաբանի, ջատագովի և Քրիստոսի վերջին այս առաքյալի ճառերում, և որտեղի՞ց այն:

Իսկ նորմը, որոշ վերապահությամբ, բուն զրադաշտական է, այն է՝ հին հայկական, ազգային իրավական սիստեմի նորմ: Զրադաշտական իրավունքով անհուսությամբ լաց ու կոծը թաղման ծեսի (Իսկ Ավեստայում առկա է մի ամբողջ ֆրակարդ, որը կոչվում է հենց «Մահվան ծես») նորմերով եղել է արգելված՝ համարվելով դիվական արարք: Ավեստայի «Վիդեդատ» նասքի «Աշխարհագրական պոեմ» ֆրակարդի 8 ստանսում Աիուր-Մազդն (Արամազդը) ասում է. «Վեցերորդ. լավագույնը երկրներից և բնակության վայրերից ես՝ Աիուր-Մազդս, արարեցի Զարոյվան՝ լքված տներով: Դրան հակառակ Անխրա Մանյուն (Աիրիմանը) ծեփռտեց **բազմակործան լացն ու կոծը** (հեծեծանքը)»⁵: «Բազմակործանի» տակ այստեղ պետք է հասկանալ նաև «անհուսությամբ» լաց ու կոծը, որն էլ դիտվում է գլխավոր դևի կողմից ստեղծված և դիվական արարք:

³ Տե՛ս Կանոնագիրք հայոց, Աշխատասիրությամբ՝ Վ. Զակոբյանի, Երևան, ԶԶ ԳԱ հրատ., Զ.1, 1964, էջ 244-249:

⁴ Տե՛ս Չաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 83:

⁵ Տե՛ս Աвестա в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака. Журнал «Нева», «Летний сад», Санкт Петербург, 1998, с. 71- 72:

Զրադաշտական իրավունքի ճանաչման աղբյուր հանդիսացող իրանական «Դատաստան-ի մենոգ-ի խրատի» 43 գլխում էլ ասված է. «...Ավեստայից հայտնի է,որ Էրանվեժում մարդկանց կյանքը 300 տարի է,.... նրանց մոտ ցավն ու հիվանդությունը քիչ է, նրանք չեն ստում, չեն լացում ու կոծում (կամ հեծեծում – Ս. Խ.) և ագահության դևի իշխանությունը նրանց վրա քիչ է»⁶: Ըստ «Արտա Վիրապ մամակի»¹⁶ գլխի, երբ Արտա Վիրապը երկու դիցերի՝ Ատր Յագատի և Սրոշ Առաքինու ուղեկցությամբ ուղևորվում է դժոխք շրջագայության, ապա դրա ճանապարհին նա տեսնում է «մի մեծ գետ՝ խավար, ահռելի դժոխքի պես: Շատ հոգիներ կային այդ գետի մեջ. կային այնպիսիները, որ անցնել չէին կարողանում, և կային այնպիսիները, որոնք մեծ նեղությամբ անցնում էին, և կային, որ հեշտությամբ անցնում էին»: Նրա հարցին, թե դա ինչ գետ է, ուղեկից դիցերը պատասխանում են, որ «Այդ գետը այն առատ արտասուքներն են, որ մարդիկ անցավորների հետևից թափում են և լաց ու շիվան ու աղաղակ են բարձրացնում. այդ արտասուքը ապօրինաբար են հեղում և այդ գետը վարարեցնում: Նրանք, ովքեր չեն կարողանում անցնել, նրանք են, որոնց գնալուց հետո շատ լաց, շիվան ու աղաղակ են արել, իսկ հեշտ անցնողները նրանք են, որոնց հետևից քիչ են լացել: Երկրավորներին ասա. «Դուք, որ երկրի վրա եք, լաց, շիվան և աղաղակ մի անեք ապօրինաբար, որովհետև սրանք են այն չարիքն ու դժվարությունները, որ ձեր անցավորների հոգուն են հասնում»: Նույն «Արտա Վիրապ մամակի» 57 գլխում, արդեն բուն դժոխքում շրջագայելիս՝ Արտա Վիրապը տեսնում է կանանց հոգիների, որոնք գլխատված էին, իսկ նրանց «լեզուները շարունակ աղաղակ էին բարձրացնում»: Դիցերին հարցուփորձ անելուց պարզվում է, որ այդ հոգիները երկրի վրա «շատ լաց ու շիվան են արել, և գլխին ու երեսին խփել»⁷:

Այսպիսով, նորմը միանշանակ զրադաշտական է և Գր. Լուսավորչի կողմից այն ռեցեպցիայի է ենթարկվել և ներդրվել իր կողմից կառուցվող քրիստոնեական իրավական սիստեմի մեջ, քանի որ այդ սիստեմում, որի ձևավորումը դեռևս ավարտված չէր, նման նորմ դեռևս չկար: Իսկ հարցին, թե ինչու՞ է նման արարքը արգելված եղել զրադաշտական, հետո նաև՝ քրիստոնեական իրավունքով (առայժմ՝ հայկական), և ինչո՞ւ նման արարքը արգելող նորմ գոյություն չի ունեցել այլ իրավական սիստեմներում, օրինակ՝ հին հրեական, հին հունական, հռոմեական, կամ բաբելական իրավունքում (Համուրապիի օրենսգրքում), ապա դրան պետք է պատասխանել հետևյալը: Դրանցում նման նորմ գոյություն չի ունեցել, քանզի նրանց կրոնական պատկերացումներով հանդերձյալ աշխարհ կամ չի եղել, կամ էլ այն եղել է մեկ միասնական ամբողջություն, ուր մահվանից հետո գնում էին և բարի և չար մարդկանց հոգիները: Չի եղել երկնային թագավորության ու դժոխքի մասին տարբերակված պատկերացում: Դրա համար այդ կրոնների հետևորդները չէին կարող հույս ունենալ, որ երկրային կյանքում լավ գործեր կատարելու դիմաց որպես վարձ կարող են արժանանալ Աստծու մոտ

⁶ St'u Зороастрийские тексты. Суждения Духа разума (Далестан-и меног-и храт). Подготовлено к печати О. М. Чунаковой. «Восточная литература», М., 1997. (Памятники письменности Востока, CXIV), с. 44.

⁷ St'u Արտա Վիրապ մամակ, Պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 63, 87:

կամ աստվածների կաճառ ընկնելուն կամ խուսափել ընդհանուր անդրաշխարհ ընկնելուց: Դա բացառված էր: Դրա համար էլ անհմաստ է եղել անհուսությամբ սգացողին պատժել այն բանի համար, որ նա չի հավատում երկնային թագավորությանը, դժոխքի գոյությանը և հոգու փրկությանը: Դրանցում չի եղել նաև արդար կամ վերջին դատաստանի, մեռելների հարության ու վերջնական փրկության գաղափարը, որոնք առկա են զրադաշտական ու քրիստոնեական հավատալիքներում: Նման պատճառներով էլ անհուսությամբ լաց ու կոծը այդ կրոնական, իրավական սիստեմներում չի դատապարտվել:

Երկնային թագավորության և դժոխքի մասին հավատալիքները առկա են միայն զրադաշտական, հետո նաև՝ հայկական քրիստոնեական աղբյուրներում: Մարդը պետք է անպայման հավատա երկնային արքայության և դժոխքի գոյությանը, ապրի երկնային թագավորության հույսով ու դժոխքից խուսափելու ձգտմամբ: Նման հավատամբ ունեցող մարդն էլ, հասկանալի է, պետք է ձեռնպահ մնա ամեն մի չար արարքից, որպեսզի կարողանա ապահովել երկնային թագավորություն ընկնելու և դժոխքից խուսափելու հնարավորությունը: Դրա պատճառով այդ երկու իրավական սիստեմներում էլ նշված հավատալիքներն առնված են եղել քրեական օրենքի պաշտպանության տակ:

Ջրադաշտական երկնային արքայությունը մանրամասնորեն նկարագրված է Ավեստայում և «Արտա Վիրապ նամակում»: Դա չորս օթևաններից բաղկացած, անուշաբույր հոտերով հագեցած հավերժական լույսի, պայծառության, հանգստի, ուրախության ու երջանկության վայր է: Այնտեղ մուտք գործած հոգուն՝ անկախ նրա դասային ծագումից, դիմավորում է նրա բարի մտքերը, խոսքերն ու գործերը մարմնավորող գեղեցիկ աղջիկը և նրան, այլ հրեշտակների ուղեկցությամբ, երգով, նվագով ու պարերով առաջնորդում դեպի նրա համար պատրաստված հարկաբաժինը: Օթևաններից որևէ մեկում տեղավորվելու հարցն էլ որոշվում է ամեն մի հոգու կողմից երկրում դրսևորած «արժանավորության» չափով⁸:

Ջրադաշտական դժոխքն էլ, ըստ նույն աղբյուրների, նորից չորս օթևաններից բաղկացած, մութ, խավար, ցուրտ և զարշառուտ սառցափոսների համակցություն է, որոնցում դներն ու զանազան գեռուներ՝ խրաֆսթարները, այնտեղ ընկած հոգիներին պատճառում են ամենամահավանական և հավանական տանջանքներ: Երկնային թագավորությանը, դժոխքի գոյությանը չհավատացող, երկնային թագավորություն ընկնելու հույս չունեցող, դժոխքի տանջանքներից խուսափել չձգտող, այն է՝ անհուսությամբ տառապող անձը, ըստ զրադաշտական հավատալիքների, համարվել է անընդունակ ամեն տեսակի լավ, բարի արարք կատարելու և հանցագործ:

Երկնային թագավորության, ինչպես նաև դժոխքի, դրանցում առկա բարքերի ու կարգերի մասին զրադաշտական պատկերացումներն ընդօրինակվել են Գր. Լուսավորչի կողմից և գրեթե նույնությամբ արտացոլված են «Հաճախապատում ճառքում»⁹: Եվ դա՝ Դանթե Ալիգերիից բազմաթիվ դարեր առաջ: Իսկ մինչ Գր.

⁸ St'u Авеста в русских переводах (1861-1996), էջ 408-410; Արտա Վիրապ նամակ, էջ 52-62: Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, էջ 61, 74, 83, 105, 125 և այլն:

⁹ St'u Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 83:

Լուսավորչի այս աշխատությունը եթե դրանց գոյության մասին եղել է հավատ, ապա այն եղել է խիստ վերացական՝ հիմնված միայն Նոր Կտակարանի բովանդակած բավականին անորոշ ձևակերպված, այլաբանական դրույթների վրա, որոնցում դրանց կառուցվածքի, բարքերի ու կարգերի մասին որևէ տեղեկություն կամ նկարագրություն չկա և դրանք որոշակիացված չեն: Երբեմն այնտեղ խոսվում է դժոխքում «լացի և ատամների կրճտման», ինչպես որ է Մատթեոսի ավետարանի 8 գլխի 12 տանը և այլուր, տոչորոդ հրի մասին, բայց ոչինչ ավելին: Ահա դրանց գոյության գաղափարը պաշտպանելու, այդ միջոցով մարդկանց օրինական վարքագիծ ցուցաբերելու մեջ շահագրգռելու համար էլ անհուսորեն լացուկոծ անելու ու իրեն ցտելու մասին այս նորմը ռեցեպցիայի է ենթարկվել, մուտքագրվել և ներդրվել հայկական քրիստոնեական իրավական, կրոնական և բարոյական սիստեմների մեջ:

Առաջին հայացքից թվում է, թե «Հաճախապատում ճառքի» այս նորմը նման է Գր. Լուսավորչի կանոնների «ԺԷ» գլխում նախատեսված քննարկվող արգելող նորմին: Այն կոչվում է «Վասն որք կոծ դնեն», իսկ բուն նորմը ձևակերպված է հետևյալ կերպ. «Որք կոծ դնեն եւ զհերս խզեն եւ կամ զճակատ հարկանեն՝ նզովեալ լիցին ի կեանս եւ ի մահ»¹⁰: Դրա ու «Հաճախապատում ճառքում» նախատեսված նորմի միջև, անկասկած, միակ զուգահեռը կոծն է: «Կանոնների» այդ գլխում փաստորեն ձևակերպված է այլ նորմ: Այնտեղ նախատեսված է ոչ թե լաց ու կոծը, այլ միայն կոծը, իսկ ցտելու մասին խոսք չկա: Բացի դրանից, այնտեղ խոսք է գնում «ճակատին խփելու» մասին, որը ցտելու հետ, ինչպես կպարզվի, փաստորեն կապ չունի: Ինչ վերաբերում է այդ նորմի վերջին բաղկացուցչին՝ «մազերը խուզելուն», ապա այն նույնպես «ԺԲ» ճառքի 38 տանը նախատեսվածի հետ կապ չունի: Այն իրենից ներկայացնում է առանձին արգելող նորմ, և այդտեղ ներկայանում է որպես սուգ անելու դրսևորումներից մեկը, որով էլ դրանք վերջնականորեն իրարից սահմանազատվում են¹¹:

Իսկ քննարկվող նորմի մասին լիակատար պատկերացում կազմելու, դրա նշանակությունն ու իմաստը պարզաբանելու համար պետք է կատարել դրա մեջ ամրագրած հանցակազմի վերլուծություն՝ ըստ դրա բաղկացուցիչ կառուցվածքային մասերի: Այդ կապակցությամբ նախ պետք է ասել, որ այդ հանցակազմը ձևական է: Արարքն ավարտված է համարվում կատարման պահից, որն էլ արտահայտվում է հանգուցյալի վրա անհուսությամբ լաց լինելու, կոծ անելու և ինքն իրեն «ցտելու» գործողություններից որևէ մեկը կամ բոլորը կատարելու մեջ: Ինքն իրեն ցտելը արարքի հետևանք չի կարող դիտվել և այն հանցակազմը նյութական չի դարձնում:

Արարքի անմիջական օբյեկտներից թիվ 1-ը մահվան ծեսի կատարման օրենքով սահմանված կարգն է: Դրա հետ միասին այս տներում առկա են նաև այլ պարտադիր կամ լրացուցիչ անմիջական օբյեկտներ, որոնք չկան Գր. Լուսավորչի «ԺԷ» կանոնում: Դրանք են. 2. Աստծու, «Նրա ընտանիքի» և երկնավոր զորքերի ու երկնքում գտնվող արդարների հոգիների «հանգստությունը», որոնք նման արարքով «տրտմեցվում» են, 3. Անհուսությամբ սգացողի և բուն հանգուցյալի

¹⁰ Տե՛ս Կանոնագիրք հայոց, Աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 3.1, 1964, էջ 244-247:

¹¹ Տե՛ս Կանոնագիրք հայոց....:

հոգիների «հանգստությունը» երկրի վրա և երկնքում, որոնք մնան արարքով երկրային ու հոգևոր օրենքների «պատժի տակ են գցվում», «պատուհասների վճիռներին» ենթարկվում, 4. Նման արարքով դրսևորվում է անհավատություն Աստծու, երկնային Թագավորության, հոգու անմահության նկատմամբ, հերքվում է դրանց ու դժոխքի գոյությունը կամ դրանց գոյությունը կասկածի տակ է դրվում: Նման հանցանքներ գործողները դատապարտվել են երկրի վրա: Համարվել է, որ հանդերձյալ կյանքում նրանք և այն անձինք, որոնց մահվան կապակցությամբ կատարվել է լացուկոծը կամ ցտումը՝ միանշանակորեն արժանացել են դժոխքի (համապատասխան արարողակարգով նրանք հենց դժոխք էլ ուղարկվել են):

Այս ամենի ուժով էլ մնան արարքը ծեռք է բերում նաև սեռային օբյեկտ, դառնում սահմանադրական նորմ և քրիստոնեական իրավական սիստեմի մեջ (ինչպես նաև զրադաշտական) գրավում ամենակարևոր տեղերից մեկը: Այն փաստորեն կոչված է պաշտպանելու ոչ միայն վերոնշված, այլ նաև այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են պետության ու եկեղեցու գաղափարական հիմքերը, պետության հպատակների հանգստությունը, խաղաղությունը, ամեն մեկի և ընդհանուրի հոգեկան անդորրությունը, ինչպես նաև հասարակության, եկեղեցու ու պետության միասնությունը, ամբողջականությունը, անվտանգությունը:

Այսպիսով, արարքի սեռային օբյեկտը բազմաբովանդակ ու բազմադեմ, կառուցվածքի տեսակետից բարդ ֆենոմեն է, որի մեջ հատուկ տեղ ու նշանակություն ունի «Հանգստությունը»: Այն զրադաշտական ամենակարևոր և նշանակալից նորմատիվ գաղափարներից է, երկնային Թագավորության հատկանիշներից ու բնութագիրներից մեկը: Երկրային ամեն մի տիրակալի ու նրա կառավարության պարտքն է համարվել պետության մեջ և նրա սահմաններին նույնպես հաստատել հանգստություն, խաղաղություն: Այն գոյանում է ամեն մեկի հոգու հանգստությունից երկրում և հանդերձյալ կյանքում: Մասնավորապես, անհուսորեն լաց ու կոծից մահացածի հոգին, որը, ըստ զրադաշտական հավատի, «ներկա» է գտնվում սգո արարողությանը, անհանգստանում է: Հասկանալի է, որ անհանգստացած վիճակում նա չի կարող գնալ Երկնային Թագավորություն, քանզի դրա հետևանքով կարող է խախտվել այնտեղ տիրող, ինչպես նաև դրա բնակիչներին բնորոշ հոգեկան հանգստությունը, անդորրությունը, խաղաղությունը: Դրա հետևանքով կարող է խախտվել թաղման ծեսին ներկա գտնվող անձանց հոգեկան հանգստությունն ու հասարակական հանգստությունն ընդհանրապես, նրանց հոգում կարող է սպրդել անհավատություն և կասկած Աստծո, Երկնային Թագավորության և հոգու անմահության նկատմամբ:

Անհանգստությունն էլ դժոխքին բնորոշող հատկանիշ է: Կռիվը, ծեծը, անհուսությամբ կատարված լացը, ողբը, կոծը, ինչպես նաև դեմքը, մարմինը ցտելը, դժոխքի երևույթներ են, դժոխքը և դրա բնակիչներին բնորոշող վարքագծի ակտ ու գաղափար: Ըստ «Արտա Վիրապ Նամակի» Ջրադաշտական դժոխքում հանգրվանած հոգիները ոչ մի րոպե հանգիստ չունեն: Նրանց անընդհատ անհանգստացնում, տանջում են դևերն ու խրաֆսթարները: Նրանք այնտեղ անընդհատ լացում, աղաղակում են անհուսությամբ, ցտում իրենց, կտրտում իրենց մարմինն ու դեմքը, բայց նրանց լսող, խղճացող չկա: Այնտեղ բացակայում է անդորրությունը, խաղաղությունը, հասարակական միասնությունը, ամեն մեկի ու

յուրաքանչյուրի անվտանգությունը, և տիրապետողը անկարգությունն ու կազմակերպված քաոսն է: Եվ դա՝ ինչպես զրադաշտական օրթոդոքսիայում է, այնպես էլ քրիստոնեական, որի վկայությունը Գ. Լուսավորչի այս անմահ երկն է: Դրա համար էլ Ավեստայում և ավեստական գրականության մեջ, հետո նաև՝ «Հաճախապատում ճառքում», հանգստությունը, անդորրը, խաղաղությունը պաշտպանության ենթակա բացարձակ արժեքներ են և դրանց պաշտպանության կարևորությունը անընդհատ շեշտվում է: Ավելորդ չի լինի ասել, որ արարքի կամ ոտնձգության օբյեկտի մեջ չի մտնում սգացողի կամ թաղման ծեսի մասնակցի անձնական առողջությունը՝ ֆիզիկական կամ հոգեկան:

«Հաճախապատում ճառքի» այս նորմում արարքի սուբյեկտ է հանդիսանում ինչպես տասնհինգ տարին լրացած, մկրտված, քրիստոնեություն ընդունած անձը, այնպես էլ այլահավատ ամեն ոք:

Արարքի օբյեկտիվ կողմը դրսևորվել է երեք տեսակի գործողությունների՝ անհուսությամբ լացելու, անհուսությամբ կոծ անելու և անհուսությամբ իրեն ցտելու արարքների մեջ: Լացը, հասկանալի է, արտասվելն է, որը կարող է տեղի ունենալ և ուրախությունից, և վշտից: Ինքնին սգալիս լաց լինելն իր մեջ երբևիցե և որևէ տեղ և որևէ քաղաքակրթության մեջ, որևէ կրոնով ու իրավունքով, այդ թվում՝ զրադաշտական կամ քրիստոնեական, որպես հակաիրավական կամ հակակրոնական արարք չի դիտվել: Հարազատներից, սիրած մարդկանցից բաժանվելիս միշտ էլ մարդիկ արտասվել են: Որոշակի դեպքերում միայն այն համարվել է զինվորականին, ազնվականին կամ հերոսին ոչ վայել արարք: Բայց այլ է լացը, որը կատարվում է անհուսությամբ դեպի Աստված, ուղեկցվում Երկնային Թագավորության ու դժոխքի գոյության բացակայության գիտակցմամբ և դրանց գոյությունը ժխտելով: Այլ է նաև լացը, որը վերածվում է ոռնոցի, ընթանում այլանդակ ձևերի մեջ, ուղեկցվում աստվածահայիցությամբ, անեծքներով, ուրիշներին վիրավորող արտահայտություններով՝ խանգարելով թաղման ծեսը, դրա կանոնները, հասարակական և հանգուցյալի հոգու հանգիստը, կարգը և անվտանգությունը: Ահա անհուսորեն կամ այլանդակ ձևերի մեջ կատարվող լացն էլ զրադաշտական և վաղ քրիստոնեական իրավունքի այս նորմով եղել է արգելված և քրեորեն պատժելի արարք:

Բավականին բարդ ու դժվար է կոծը որպես այս արարքի օբյեկտիվ կողմի դրսևորում և հատկանիշ բնորոշելը: «Գրաբարի հոմանիշների բառարանում» կոծի հոմանիշներ են դիտվել «Լացը, ալեկոծությունը, ծփումը, ծեծելը, բախելը, հարկանելը, կեփելը, սգալը, աշխարելը, երգելը»¹²: Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» կոծելու բովանդակությունը բացահայտվել է որպես «Ծեծել, հարվածել, բախել, կուրծքը, երեսը, գլուխը ծեծել ի նշան սգո, կուրծքը, երեսը ծեծելով սուգ անել»: Այնտեղից նաև պարզվում է, որ եղել է նաև կոծապար, որը «բռնում էին լալկանները մեռածի շուրջը» և «կոծակից», որը նշանակում է կոծի մասնակից¹³: «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» կոծի հոմանիշներ են դիտվել «սուգը, լաց ու կոծը, ողբը, վայնասունը, եղերերգը,

¹² Տե՛ս **Ղազարյան Ռ. Ս.**, Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, էջ 386:

¹³ Տե՛ս **Սալխասեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, Զ. 1, էջ 458:

հեծր, ողբանքը, սուգ ու շիվանը, աշխարը» և այլն¹⁴: «Արդի հայերենի բացատրական բառարանում» էլ կոծի բովանդակությունը բացահայտվել է որպես «Բարձրաձայն լաց, ողբ, սուգ, կուրծքը, երեսը ծեծելը՝ ի նշան սգի»: Դրանից անմիջապես հետո էլ բացատրված է «կոծապար» բառը՝ որպես «կոծի, սգի պար»¹⁵: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» «Կոծի» բովանդակությունը բացահայտված է որպես «բարձրաձայն լաց, ողբ, սուգ, լացուկոծ, ճիչ, գոռոց», «կոծապարը»՝ «սգի պար», կոծ անողը՝ «կոծող» կամ «կոծացող», կոծի մասնակիցը՝ «կոծակից», իսկ «Կոծադիրը» կամ նրանց ղեկավարը՝ «Եղերամայր»¹⁶: Այս բացատրությունները և որոշ բառեր կարևոր են այս հանգակազմի (երբեմն՝ զանցակազմի, քանզի զրադաշտական իրավունքի նորմերը եղել են մոնոնորմեր¹⁷) իրավական բովանդակությունը պարզաբանելու և սահմանելու համար: Բայց պետք է նշել, որ այս բառարանները այնքան էլ ճիշտ չեն բացահայտում «կոծ» հասկացության իմաստը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ կոծն էլ միայն ողբը չէ, և ինքնին հանգագործություն կամ խախտում չի եղել: Այն եղել է հուղարկավորման ծեսի կարևոր, իրավունքի նորմերով սահմանված ու կանոնակարգված արարողակարգ, որը ոչ միայն թույլատրվել, այլ նաև պարտադրվել է: Կոծը, ինչպես նաև բուն մահվան ծեսը՝ այս ճառերի ու հայ պատմիչների հաղորդումների հիման վրա, կարելի է բաժանել երկու տեսակի՝ կոծ, որը կատարվել է հանգուցյալների հարազատների կողմից և կոծ, որը կատարվել է վարձու ողբասացների, կոծողների կողմից: Կոծը կարելի է և պետք է բաժանել նաև օրինականի և անօրինականի: Օրինական թաղման ծեսը և, մասնավորապես՝ դրա մաս հանդիսացող կոծը, զրադաշտական, այնուհետև՝ հայկական քրիստոնեական ավանդություն եղել է հանդիսավոր արարողություն և ունեցել մեծ խորհուրդ: Օրինական կոծը կարելի է բնորոշել որպես հատուկ կանոններով կատարվող թաղման ծեսի անհրաժեշտ և բաղկացուցիչ մաս, սգո երգերի և պարերի շարք, ճառասածություն և միստերիաներ՝ նվիրված հանգուցյալի հիշատակին, և դա այն հույսով ու համոզմամբ, որ ննջեցյալի հոգին ուղևորվում է դեպի երկնային թագավորություն: Դրան մասնակցել են հանգուցյալի հարազատները և վարձու կոծողները: Դրա գլխավոր բնութագրողը հույսն է այն մասին, որ հանգուցյալի հոգուն հուղարկավորողները ճանապարհում են ավելի երջանիկ բնակավայր՝ Երկնային Թագավորություն, դրա չորս օթևաններից մեկը, որի գրավականներից մեկն էլ հենց պատշաճ մահվան ծեսն է: Դրա համար էլ երկրում մնացածները, այդ թվում՝ ծեսի մասնակիցները, պետք է ուրախանան և հրճվեն: Այն ուղեկցվել է միայն չափա-

¹⁴ Տե՛ս *Սուքիասյան Ա. Մ.*, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 330:

¹⁵ Տե՛ս *Աղայան Է. Բ.*, Արդի հայերենի բացատրական բառարան, Զ. 1, Երևան, 1976, էջ 747:

¹⁶ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Զ. 3, Երևան, 1974, էջ 164:

¹⁷ Տե՛ս *Лукатова Е. А.* Право, мораль, Личность, М., «Наука», 1986, էջ 47-53 (Լուկաշևայի այս աշխատության մեջ մոնոնորմեր են դիտվում նախնադարյան համայնական հասարակության նորմերը, որոնք բաժանված չեն եղել իրավականի, բարոյականի և այլն: Բայց զրադաշտականում էլ, ինչպես ցուց են տալիս մեր դիտարկումները, դրանք իրարից տարանջատված չեն եղել, և արարքների իրավական, կրոնական, բարոյական կամ քաղաքական խախտում լինելը պարզվել է դատարանում, որից հետո միայն, և ըստ այդմ էլ, որոշվել է պատժատեսակ, տույժի տեսակ ու չափ):

վոր լաց ու կոծով և դիտվել միայն ժամանակավոր բաժանման դրսևորում: Դրա ժամանակ վարձու կոծողների ու հարազատների կողմից պարտադիր կերպով կատարվել է ննջեցյալի գովքը, որն ուղեկցվել է թաղման ծիսական երգերով, նվագով ու պարերով, այդ թվում՝ ուրախ ու ցնծագին:

Կարելի է ենթադրել, որ զրադաշտական մահվան ծեսի ժամանակ դախմի մատուցներում մահացածին ու նրան ուղեկցող թափոփին դիմավորել է կոծողների նույն կամ մեկ այլ խումբ, և նորից՝ նոր կոծով, այն է՝ երգերով ու պարերով, ինչպես որ մահացածի հոգուն դիմավորում էին հրեշտակները զրադաշտական երկնային Թագավորության մատուցներում, որը նկարագրված է Ավեստայի «Հոգու բախտը մահվանից հետո» յաշտի 1-16 տներում¹⁸: Պետք է նշել, որ այդ նույն պատկերացումը հանգուցյալին այնտեղ դիմավորելու մասին «Հաճախապատում ճառքում» է (ճառ «ԺԲ» 34-37)¹⁹: Եվ այդ ամենը ոչ թե պարսկական է՝ պարտադրված հայերին, այլ, ինչպես մենք ապացուցել և ապացուցում ենք, նախ և առաջ հայկական է և հայերից է անցել պարսիկներին ու իրանական այլ ժողովուրդներին: Այսպիսով, օրինական կարգով կոծել՝ նախ և առաջ նշանակում է սգո այնպիսի երգեր երգել և պարել, որոնց մեջ, դրա որոշակի փուլում, առկա է նաև ցնծության պահ, որի տակ ներկաները կարող էին զգացվել և արտասվել: Եթե, իհարկե, ննջեցյալը դիտվել է որպես երկրային կյանքում իրեն հավատացյալ դրսևորած, բարի գործեր կատարած առաքինի անձնավորություն, որին հնարավոր և պետք է եղել դրվատել, գովել, գովերգել, գովերգի մեջ թվարկել նրա բարեմասնությունները՝ մարմնական և հոգևոր, բարի գործերը, հերոսությունները:

Կոծի մյուս տեսակը անօրինական, այսինքն՝ նախ, անհուսությամբ (հուսահատությամբ) կատարվող կոծն է, որն էլ զրադաշտական օրթոդոքսիայում և «Հաճախապատում ճառքում» նախատեսված այս նորմով արգելվում է: Եվ այն ոչ միայն և ոչ թե բարձրաձայն ողբը, ճիչը, գոռոցը, երեսին, դեմքին ու զլխին՝ ֆիզիկական հետևանքներ ու մարմնական վնասվածքներ առաջացնելով կամ առանց դրանց, խփելն է, այլանդակ շարժումներ անելը, հայիոյելը, անձոքն ու բարկությունը, այլ այնպիսին, որի ժամանակ՝ պահպանելով ծեսին պատշաճ ձևերը, կասկած ու տարակուսանք է արտահայտվում Աստծո, Երկնային Թագավորության, հոգու անմահության գոյության վերաբերյալ, կամ էլ հերքվում է դրանց գոյությունն ընդհանրապես: Առանց դրանց նկատմամբ հավատի մեծն Ի. Կանտը մարդու կյանքը նույնպես համարում էր անհնարին²⁰:

Մահվան կամ հուղարկավորության ծեսը և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող կոծը եղել է իրավական և օրինական արարողակարգ: Դրանք սպասարկելու համար գոյություն է ունեցել եղերերգուների, ծայնասացների (ծայնարկուների), երգողների կամ գովք, գովասանք անողների, պարողների, գուսանների, վեպեր պատմողների և պարողների ամբողջ բանակ: Գոյություն են ունեցել նաև թաղման ծեսերն ուղեկցող հատուկ երգերի ժանր, պարեր, մեղեդիներ ու եղանակ-

¹⁸ Տե՛ս Авеста в русских переводах (1861-1996), էջ 408-410, 411.

¹⁹ Տե՛ս Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 83:

²⁰ Տե՛ս **И. Кант.** Сочинения. В 6-и томах. Изд. М., «Мысль», 1965, т. 4 (1), с 69-311, 313-484; т. 4 (2), с. 351-437.

ներ, կատարման ոճ ու չափ, պարատեսակներ, և դրանք բոլորը արգելել կամ, առավել ևս, վերացնել քրիստոնեական եկեղեցու կողմից հնարավոր չէր և նպատակահարմար էլ չէր: Դրանք ոչ միայն կրոնաիրավական բնույթ են ունեցել, այլ նաև խորապես ազգային, ուստի դրանք օրինականացվել են: Փ. Բուզանդի «Հայոց պատմությունից» հայտնի է, որ «մեծաւ կոծովք և անհնարին աշխարանօք» է տեղի ունեցել Վաչե Մամիկոնյանի, Խոսրով Զորորոդ թագավորի, Գնել սեպուհի մահվան և հուղարկավորությունների ժամանակ, և նրանց վրա սգացել են «ծայնարկու, սևազգեստ ու աշխարող կանայք»²¹: Նման մարդիկ հասարակության մեջ եղել են հարգված և սիրված, իսկ նրանց արվեստը՝ հզոր ազդակ գրադաշտական, այնուհետև՝ քրիստոնեական գրականության, երաժշտության, ընդհանուր մշակույթի զարգացման համար:

Այս ամենի լույսի ներքո կրկին անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու այսպես կոչված «թուելյաց երգերի» հիմնահարցին, որոնց գաղտնիքն այդպես էլ մինչև այժմ պարզված չէ: «Թուելյաց երգերի» մասին հիշատակում է Մ. Խորենացին իր «Հայոց պատմությունում»²², առանց դրանց բնույթի մասին որևէ պատկերացում տալու: Միայն ասվում է, որ դրանք պահպանվել են Գողթն գավառում, որը համարվել է գուսանների ու ասմունքողների երկրամաս (որի համար էլ երբեմն այդ շրջանը դիտվել է հեթանոսության օջախ ու պատվար): Մ. Աբեղյանը համառորեն պնդում է, որ «թվելյաց երգ» անվանումը «թվելու», «համարելու» հետ կապ չունի, որ դրա տակ պետք է հասկանալ սոսկ «պատմել», որ այն «վիպասանաց երգերի» մի ուրիշ կոչումն է միայն»²³: Դա մոլորություն է, որն այդպես էլ չի հերքվել: Մեր մի հոդվածում արդեն նշվել է, որ թվելյաց երգերն ամենաանմիջական կապ ունեն թվելու հետ: Ավեստական իրողությունների ու վերոշարադրվածի լույսի ներքո կարելի է պնդել, որ «թուելյաց երգերը» եղել են երկու տեսակի՝ սգո թվելյաց երգեր, որոնք կատարվել են թաղման ծեսի և սգո այլ արարողությունների ժամանակ, որոնք մտել են կոծի մեջ և թվելյաց երգեր, որոնք կատարվել են պետական-եկեղեցական և անձնական տոների, հանդեսների ժամանակ:

1. Դրանք երգվել են թաղման ծեսի ժամանակ, կոծի ընթացքում, և դրանց մեջ գովերգվել է հանգուցյալը, թվարկվել են նրա արժանիքները, բարի գործերը, անունները և այլն և դրանք պանծացվել են: Մահվան ծեսի ժամանակ դրանք երգողները կամ «Գովք ասողները», կամ «գովասանք անողները» լացով ու կոծով հանգուցյալի հարազատների հետ նրա գովքն են արել, որի ժամանակ, ինչ որ պահի, կատարվել են նաև ուրախ երգեր, քանզի եղել է համոզմունք, որ ննջեցյալի հոգուն իրենք ուղեկցում են դեպի հավերժական հանգստության, երջանկության «նավահանգիստ»: Խորենացին հաղորդում է, որ Արտաշես թագավորի մահվան ծեսի ժամանակ ոչ միայն «կուսանք ծայնարկուք սևազգեստք և աշխարհող կանայք» իրենց ղեկավար «մայր որբոց» կոչվող կնոջ գլխավորությամբ «խոսքերով գովել են ննջեցյալին», այլև դա արել են «երգի եղանակով»՝ դրա

²¹ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 44 (45), 46 (47), 190 (191):

²² Տե՛ս **Սովետ Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 98 (99):

²³ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն՝ վեց հատորից, Զ. 1, Երևան, ՀՍՍՌ ՊԱ հրատ., 1944, էջ 44-45:

հետ միասին էլ «աղիողորմ լացել»²⁴։ Դա էլ նշանակում է, որ նրանք երգել են սգո թվեյաց երգեր։ 2. Դրանք երգվել են տոների ժամանակ, հարսանիքներում, խրախճանքներում, որոնց ժամանակ թվարկվել, գովերգվել և փառաբանվել են հեթանոսական աստվածները, առասպելական հերոսները, թագավորները, հարսն ու փեսան, անվանակոչը և այլն։ Քանի որ աստվածները, հերոսներն ունեցել են բազմաթիվ անուններ, ապա դրանցում թվարկվել ու փառաբանվել են այդ բազմաթիվ անունները, նրանց բարի կամ հերոսական գործերը, արժանիքները։ Դրանց ժամանակ կատարվել են Ավեստայի յաշտերը, ֆրակարդները, գաթաները, հիմներն ու աղոթքները, փառաբանվել ու գովերգվել են ավեստական հին աստվածները, հերոսները, դրանք իրենց կողմից զարդարելով առավել ճոխ գեղարվեստական պատկերներով ու բնութագրերով։

Հենց նման ասմունքողներից ու երգողներից էլ խորենացին լսել է «Վահագնի երգը»։ Այն Ավեստայի «Վարախրան կամ Բահրամ-յաշտի» պատկերներից ձևավորած և առավել չափով գեղարվեստականացված թվեյաց երգ է, դրա մի հատված՝ «ամենաամենողը», որում թվարկված են Վահագնի մարմնական բարեմասնությունները։ Այդ երգը անիջական կապ ունի Ավեստայի «Վարախրան-յաշտի» 13, 16, 25, 27 տների հետ, որոնցում Վերթրագնը (Վահագնը) բնութագրվում է «փայլուն աչքերով», «գեղատեսիլ պատանի՝ տասնհինգ տարեկան», «գեղեցիկ», «բարձրահասակ», «հոյակապ՝ բռնած ոսկյա շեղք՝ շքեղ զարդարված» և այլն։ Ավեստայի «Օրմազդ-յաշտում» առկա են Արամազդին տրված շուրջ 72 անուններ, որոնք թվարկվում և փառաբանվում են այդ յաշտում։ Այն յուրահատուկ թվեյաց երգ է²⁵, իսկ դրա մեջ թվարկված ամեն մի անուն՝ որևէ թվեյաց երգի կամ դրա տան փառաբանման առարկա։ Փ. Բուզանդը հենց դրանք կամ նաև դրանք է կոչում «հեթանոսական երգեր» և մեղադրում հայ իշխաններին, որ նրանք սիրով լսել են այդ երգերը²⁶։ Թվեյաց երգերի մասին է խոսվում նաև Գր. Լուսավորչի «ԺԲ» ճառի 33, «ԺԵ» 22, «ԻԲ» 35 տներում։

Դժոխքի «փայ» հանդիսացող մեջեցյալի համար զրադաշտական իրականության մեջ կատարվել է այլ մահվան ծես, որը էականորեն տարբերվում է առաքինի մահացածի նկատմամբ կատարվող ծեսից։ Այդ հանգամանքը ավեստագետներին մինչև այժմ հայտնի չի եղել, իսկ այժմ մեր կողմից այն պարզվել է և դա՝ հայ պատմիչների երկերի հիման վրա։ Ազաթանգեղոսի կողմից արված Հռիփսիմեի, Գայանեի և այլ կույսերի մահապատիժների նկարագրությունից կարելի է ապացուցված համարել, որ մահվան դատապարտված հանցագործներին մահապատժի են ենթարկել դախմի վրա, իսկ մեռած կամ սպանված հանցագործին էլ քարշ տալով տեղափոխել և դրել են նույնպիսի դախմի վրա, որը հատուկ կերպով պատրաստված է եղել հանցագործների համար։ Մահապարտներին կապելու ու մահապատժի ենթարկելու համար նախատեսված դախմերը (ինչպես նաև խորվիրապները) եղել են մեղավորներին դեպի դժոխք ճանապարհելու նախադուռ, կայան։ Դրանք կառուցվելիս են եղել անհրապույր և սարսափազդու վայրերում, ինչպես որ է այս դեպքերում, և դրանց վրա կատարվող մահապատժի

²⁴ Տե՛ս *Սովետսկոնեմաղի*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 228-231։

²⁵ Տե՛ս *Авеста в русских переводах*, с.162-172, 344- 347.

²⁶ Տե՛ս *Փավստոս Բուզանդ*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 36 (37)։

Ժամանակ կրկնվել են այն բոլոր տանջալից արարողակարգերը, ինչ որ դժոխքում կատարվել են այնտեղ արդեն մուտք գործած մեղավոր հոգիների նկատմամբ:

Նրանց մահվան ծեսն էլ տեղի է ունեցել մթության պայմաններում, խոր գիշերին, ջահերի լույսի ներքո, ինչպես որ է Հեփսիսի և մի քանի տասնյակ կույսերի մահվան արարողությունը: Կամ էլ այն կատարվել է վաղ առավոտյան, բայց կրկին մթի պայմաններում, ինչպիսին եղել է Գայանեի և նրա երկու ընկերուհիների մահվան ծեսը: Նրանք ուղևորվելու էին դեպի դժոխք, որը խավարի ու գարշահոտության թագավորություն է, ուստի ծեսը կատարվել է մթության մեջ: Նրանց մահապատժի վայր հանդիսացող դախմերի տեղադրությունը, նկարագրությունը վկայում է այն մասին, որ դրանք եղել են դժնատեսիլ վայրեր և լիովին համընկնում են «Արտա Վիրապ ճամակում» ներկայացված դժոխային պատկերների հետ:

Քրիստոնեական մահվան ծեսը եղել է նույն զրադաշտական ծեսը՝ որոշ փոփոխություններով: Հիմնական փոփոխությունն այն է, որ այս դեպքում հանգուցյալները թաղվել են և ոչ թե դրվել, կապվել դախմի վրա ու թողնվել շներին ու գազաններին կեր: Ինչ վերաբերում է անհուսությամբ լաց ու կոծին, ապա դրա նկատմամբ վերաբերմունքը քրիստոնեական մահվան ծեսում գրեթե մնացել է նույնը: Միայն անհուսությամբ կոծն է եղել արգելված, դիտվել հանցավոր և ոչ թե կոծն ընդհանրապես: Կոծը եղել է մահվան արարողության բաղկացուցիչ մաս, կրոնական, բարոյական և իրավական նորմերով թույլատրված և պարտադիր, ուղեկցվել բարձրաձայն լացով, սգո թվեյաց երգերով ու պարերով, այդ թվում՝ ուրախ, որոնք էլ իրար հետ միասին, ըստ էության, կոչվում են կոծ: Հանցավոր հանգուցյալները, չկնքվածները, չապաշխարածներն ու թողություն չստացածները, ինչպես նաև ինքնասպանները, թաղվել են առանձին գերեզմանոցում և նրանց վրա կամ արարողություններ չեն կատարվել, կամ էլ կատարվել են յուրահատուկ ձևով: Նրանց թաղման ծեսի ժամանակ էլ գովք, գովասանք ասելը, երգելը, պարելը և դրա համար հատուկ կերպով ձայնասացներ կամ եղերերգուներ հրավիրելը և այլն, արդյո՞ք եղել են թույլատրված՝ դժվար է ասել:

Հանցագործության օբյեկտիվ կողմի մյուս՝ երրորդ բաղկացուցիչը կամ դրսևորման ձևը դա «ցտելն» է: Այն արգելվել է ինչպես զրադաշտական, այնպես էլ քրիստոնեական իրավունքի նորմով: Սա «Հաճախապատում ճառքի» ամենախորհրդավոր տերմիններից է: «Գրաբարի հոմանիշների բառարանում» «Ցտելու» հոմանիշներ են դիտվել «Ցավատելը, կտրատելը, հերձատելը, ծակոտելը, ճեղքելը, փետելը, քայքայելը» և այլն²⁷: Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» «ցտելը» բացատրված է որպես «Մարմինը ճանկոտել, վիրավորել»²⁸: «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» դրա հոմանիշներ են դիտվել «Պոկելը, պոկոտելը, բզկոտելը, պլոկելը, հոշոտելը, պատառոտելը, գիշատելը, հերձատելը, ծվիկ-ծվիկ անելը, փռթիկ-փռթիկ անելը» և այլն²⁹: Է. Աղաջանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» «ցտելը» բացատրված է

²⁷ Տե՛ս **Ղազարյան Ռ. Ս.**, Գրաբարի հոմանիշների բառարան, էջ 386, 668:

²⁸ Տե՛ս **Մալխասյանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան, Հ. 2, էջ 473:

²⁹ Տե՛ս **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, էջ 123, 551, 639:

որպես «Բզկտել, պոկոտել, դաջել»³⁰: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» այդ բառի բացատրությունը բացակայում է:

Այսպիսով, եթե ամփոփենք «ցտելու» մասին այս բառարանների տվյալները և փորձենք դրան տալ իրավաբանական բացատրություն, ապա կարելի կլինի այն բնորոշել որպես թաղման ծեսի ժամանակ վշտի ազդեցության տակ սեփական դեմքը և մարմինը եղունգներով կամ որևէ գործիքով ճանկոռտելը, ճղճղելը, ծակծկելը, և այդ եղանակներով իրեն մարմնական վնասվածքներ հասցնելը՝ դրանով իսկ ցուցադրելով վշտի հնարավոր բարձր աստիճան կամ առավել չափի վիշտ: Բայց՝ դա միայն այս բառարանների մեջ տրված բացատրությունների հիման վրա: Միաժամանակ, ինչպես տեսնում ենք, գլխին, դեմքին, ճակատին ու մարմնի այլ մասերին խփելը, որը նախատեսված է Գր. Լուսավորչի կանոններից «ԺԷ» կանոնում, իրավացիորեն այս բառարաններում ցտումի տեսակ կամ եղանակ չեն դիտվել: Ցտում չի համարվում նաև ուրիշին վերքեր հասցնելը: Հասկանալի է, որ ուրիշին «ցտելը» բոլորովին այլ հանցագործություն է՝ ուղղված այլ օբյեկտի՝ ուրիշի կյանքի ու առողջության դեմ, և այս հասկացության ներքո չի կարող ենթադրվել: Բայց բոլոր դեպքերում ցտումի իմաստը այդ բառարաններում այդպես էլ լիովին չի բացահայտվել: Դրանցում փաստորեն «ցտումի» հասկացության տակ չի ենթադրվել նաև ինքն իրեն ձեռքով կամ որևէ գործիքով վնասվածքներ հասցնելու միջոցով ինքնասպանություն գործելը կամ իրեն կյանքից զրկելուն հասցնելը: Այնինչ ցտումը հենց դա է կամ էլ իրեն մահ պատճառելը ցտումի (ցտումների) հետևանքով:

«Ցտումի» իսկական իմաստն ու բովանդակությունը պարզաբանելիս այս բառարաններում հաշվի չեն առնվել մի քանի կարևոր հանգամանքներ: Դրանցից առաջինը Գր. Լուսավորչի կողմից «ԺԲ» ճառի 38 տանը արված նշումն է այն մասին, որ անհուսորեն լաց ու կոծը և ցտումը մեղսագրվում է նրանց, որոնք ոչ միայն հուսահատ են, այլև «...այս աշխարհից հրաժարվածներ, ինչպես հեթանոսները...»: Սա նշանակում է, որ լաց ու կոծը և ցտումը միայն այն դեպքում են հանցագործություն կամ արգելվող արարք դիտվել, եթե կատարվել են այս աշխարհից հրաժարված, կյանքից ձեռք քաշած մարդկանց կողմից: Խոսքն առավելապես վերաբերում է հանգուցյալի ընտանիքի անդամներին և ոչ թե վարձու լաց ու կոծ անողներին: Դրանք նաև պետք է կատարված լինեին այնպես, ինչպես որ կատարելիս են եղել հեթանոսները: Իսկ հեթանոսների մահվան ծեսում ցտումը, ինչպես լաց ու կոծը, նույնպես եղել է երկու տեսակ. օրինական կարգով կատարված կամ թույլատրվող (հույսով) և ապօրինի (անհուսորեն) կատարված: Ընդ որում, այստեղ դատապարտվում է ինչպես զրադաշտական «օրինական» ցտումը, որի ժամանակ դրա կատարողները երկնային թագավորություն գնալու հույս և հավատ ունեն, այնպես էլ «անօրինականը», որի դեպքում նման հույս չի եղել: Առաջին դեպքի առթիվ էլ հիշվում են հեթանոսները և այսպիսով, քրիստոնեական այս նորմով արգելվում է ամեն տեսակի հեթանոսական ցտում:

Երկրորդ հանգամանքը, որը բառարանագիրները հաշվի չեն առել՝ «ցտել» հասկացության բովանդակությունը սահմանելիս, դա Խորենացու խորհրդավոր հաղորդումն է այն մասին, որ Արտաշես թագավորի մահվան և թաղման ծիսակատարության ժամանակ ոչ միայն «կուսանք ծայնարկուք սևազգեստք և աշխա-

³⁰ Տե՛ս **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Գ. 2, էջ 1481:

րող կանայք» «խոսքերով գովել են ննջեցյալին»՝ դա անելով «երգի եղանակով», այլ դրա ընթացքում կատարվել են նաև ինքնասպանություններ: «Որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք, հարճք և մտերիմ ծառայք» - ցավով գրում է նա: Սա նշանակում է, որ նշանավոր զրադաշտականների մահվան ծեսի ժամանակ կատարվել են նաև կամավոր ինքնասպանություններ:

Ներսես կաթողիկոսի օրենսդրական գործունեության կապակցությամբ էլ հորենացին նորից հաղորդում է, որ նա արգելեց «մեռածների վրա ոճիր գործելը՝ հեթանոսական սովորությամբ»³¹: Սա էլ նշանակում է, որ քրիստոնեական Հայաստանում, Գ. Լուսավորչի մահվանից շուրջ 25-30 տարի հետո դեռևս շարունակվել են «օրինական» ցուումները, այն է՝ ինքնասպանությունները, մոտիկ հարազատների գերեզմանների վրա, նրանցից չբաժանվելու և նրանց հետ երկնային Թագավորություն ընկնելու հույսով: Եվ Ներսես կաթողիկոսը ստիպված է եղել նորից օրենք ընդունել և արգելել նման արարքի կատարումը: Այդ փաստը կրկին վկայում է այն մասին, որ նա չի իմացել, որ իր նախնի Գր. Լուսավորիչը նման և բազմաթիվ այլ նորմեր է ընդունած եղել: Դա էլ նորից ապացույց է այն բանի, որ Գր. Լուսավորչի, Ագաթանգեղոսի աշխատասիրությունները այս կաթողիկոսին և նրա ժամանակակիցներին եղել են անհայտ և դրանք գտել, Հայաստան է վերադարձրել Սամոս կղզուց Մ. Մաշտոցը:

Այս ամենն էլ իրենց հերթին գալիս են հաստատելու, որ ցտումը զուտ ճանկռել, ծակծկել ու կտրատել չի նշանակում, այլ դա նաև դրանց սխտեմատիկ կատարման հետևանքով իրենց կյանքից զրկելու, մահ պատճառելու ծիսական արարողություն է: «Արտա Վիրապ նամակի» 64, 67, 79, 87, 94 և այլ գլուխներում դժոխքում գտնվող հոգիներին տանջում են ոչ միայն դևերն ու խրաֆսթարները, այլև երբեմն նրանք իրենք են իրենց պատճառում վերքեր, երբեմն՝ կյանքի հետ անհամատեղելի, մահացու³²: Դրանք բոլորը ցտման դրսևորումներ են, որոնք ունեցել են ոչ միայն բացասական իմաստ և կատարվել դժոխքում, այլ նաև՝ դրական, և կիրառվել երկրային կյանքում բարի հոգիների կողմից, աշխարհում, իրենց մահացած տիրոջից, տիկնոջից ու ամուսնուց չբաժանվելու, նրանց երկնային թագավորություն ուղեկցելու, նրանց հետ այնտեղ մուտք գործելու և ամենաբարձր օթևանում՝ Գարութմանում տեղավորվելու համար: Դա էլ հենց ցտումի անվան տակ արգելվել է Գր. Լուսավորչի կողմից և, ըստ երևույթին, բարյացականորեն ընդունվել հայկական հասարակության լայն խավերի կողմից: Այսպիսով, ցտումի տակ պետք է հասկանալ ոչ միայն իրեն հերձատելը, կտրատելը, ծակոտելը և այլն, այլ նաև մահվան ծեսի ընթացքում տևականորեն նման արարքներ գործելու միջոցով իրեն կյանքից զրկելը:

Այս ամենի լույսի ներքո պետք է նշել, որ ցտելը, ինչպես նաև լաց ու կոծը, եղել է զրադաշտական արարողակարգի անհրաժեշտ մաս և թույլատրվել, եթե կատարված է եղել հույսով: Իսկ Գ. Լուսավորչի կողմից արգելվել է ինչպես անհուսորեն կատարվող լացն ու կոծը, այնպես էլ հույսով կամ անհուսորեն կատարվող ցտումը: Դա նշանակում է, որ «Հաճախապատում ճառքի» «ԺԲ» ճառի

³¹ Տե՛ս *Սովսես խորենացի*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 228-231, 336 (337), 497(498):

³² Տե՛ս Արտա Վիրապ նամակ, էջ 69, 91, 93, 101, 104, 108:

38–41 տներում իր արտահայտությունը գտած և այստեղ քննարկվող նորմը նախկին զրադաշտական նորմի մոդիֆիկացիա է միայն մասամբ:

Արարքի ներքին հոգեբանական կողմն էլ դրսևորվում է **ուղղակի դիտավորությամբ** և այլ կերպ այն չի կարող կատարվել: Սուբյեկտը գիտակցում է, որ ինքը լացում, սգում և իրեն ցտում է անհուսությամբ (ցտելը Գ. Լուսավորչի մեկնաբանությամբ՝ նաև հույսով), կամ էլ նույն դիտավորությամբ խախտում է բուն ծեսի կարգը այլանդակ խոսքերով, ճիչերով, հայիոյանքով, որի ժամանակ խախտվում է հասարակական կարգը, հանգիստը և բացահայտ անհարգալից վերաբերմունք է արտահայտվում հասարակության նկատմամբ: Բոլոր դեպքերում սուբյեկտի մոտ պետք է առկա լինի հավատ, որ Երկնային Թագավորություն, դժոխք կամ հանդերձյալ կյանք գոյություն չունի, կամ էլ մահվանից հետո նրան, կամ այն անձնավորության հոգուն, որի մահն ինքը սգում է, հանդերձյալ աշխարհում ոչ մի լավ բան չի սպասում և չի կարող սպասել:

Աստվածաշնչում էլ հիշատակումներ կան լաց ու կոծի ու ցտելու որոշ ձևերի մասին, բայց ցտելու, որպես ինքնասպանության մասին՝ ոչ: Եվ, ըստ ամենայնի, Հին Կտակարանում լացն ու կոծը ոչ միայն արգելված չի եղել, այլ նաև դրանց համար որևէ հատուկ մոտիվացիա կամ պատճառաբանություն չի պահանջվել: «Ղևտականի» 19:27 տանը Մովսես մարգարեն պատվիրանում է. «մահացած որևէ մեկի հիշատակի համար ձեր մարմնի վրայ կտրուածքներ մի արեք: Ձեր մարմնի վրայ դաջուածքներ մի արեք»: «Թվերի» 11:10-13 տներում ասված է, որ Մովսեսը «...լսեց գնդերի անդամներից իւրաքանչիւրի լացն իր վրանի մոտ...: Նրանք լացում էին սովածութիւնից և միս ուզում»: «Երկրորդ օրենքի» 34:8 տանը ասված է, որ Մովսեսի մահից հետո «...խորաելցիները երեսուն օր ողբացին: Վերջացան Մովսեսի սգոյ լացի օրերը»: Թագ-երի «Բ» գրքի 1 գլխում Դավիթը ողբում է Սավուղի և Հովնաթանի մահվան համար, և նրանց հիշատակին ողբ հորինելով՝ պատվիրում բոլորին ողբալ: Թագ-երի «Բ» գրքի 3:31 տանը Դավիթը հրամայում է. «Պատառնուէք ձեր հագուստները, քուրծ հագէք ու ողբացէք Աբենների համար»: Աբենների թաղման ժամանակ էլ արքան և ամբողջ ժողովուրդը լաց էին լինում: Լացելու, սգի, ողբալու, ողբալից երգեր հորինելու, դրանց արգելված չլինելու մասին է խոսվում նաև Թագ-երի «Գ» գրքի 14:13, Երկրորդ Մնացորդացի 35:24-25 տներում, որոնցում խոսվում է Յոսիասի վրա արված սգի և այդ կապակցությամբ ասված ողբերը կանոնացնելու մասին, Հոբի գրքի 16:16 տանը: Եսթերի գրքի 4:3 տանը ասված է, որ, ստանալով Իրանի թագավորի հրովարտակը հրեաներին մասայաբար ոչնչացնելու մասին՝ «հրեաները աղաղակ էին բարձրացնում, մեծ սուգ ու կոծ անում, քուրծ էին հագնում ու մոխիր լցնում իրենց վրայ»: Մակաբ. «Ա» գրքի 9:20 տանը ասված է, որ «Իսրայէլացիները մեծ կոծով ողբացին, սուգ պահեցին բազում օրեր, յետոյ սկսեցին խօսել եւ ասել. Ինչպէս ընկաւ, ինչպէս տապալուեց Իսրայէլի հզօր փրկիչը»: Պարզ է, որ բոլոր վերոհիշյալ և այլ դեպքերում սուգը՝ պատկերված Հին Կտակարանում, խոր հուսահատության հետևանք է, բայց՝ օրենքով թույլատրվող, և նշված դեպքերում հուսահատության պատճառը կյանքը կորցնելու վախից է ծագել: Իսկ զրադաշտական և «Հաճախապատում ճառքի» նշված նորմերով հուսահատությամբ կատարվող նման ծեսերը եղել են արգելված, և դրանք Գր. Լուսավորչի ձևակերպած այս նորմի հետ որևէ ընդհանրություն չունեն: Հրեաների կրոնում, որի աղբ-

յուրը Թորան կամ Դին Կտակարանն է, բացակայում է երկնային արքայության, հանդերձյալ կյանքում Աստծու մոտ, նրա օթևան գնալու պատկերացումը և հնարավորությունը, հետևաբար դրանց բացակայությունից ծագած հուսահատություն չի կարող լինել: Ինչպես հասկանալի է, այս կրոնում մահվան առթիվ ուրախանալու պատճառ նույնպես չկա³³:

Նոր Կտակարանում ևս կան լաց ու կոծի մասին հիշատակումներ: Մատթեոսի Ավետարանի 2:17, 5:4, 13:42, 24:30 տներում, Մարկոսի Ավետարանի 5:37-39, 6:21, 23:28, Դովհաննեսի 16:20 տանը, Առաքյալ Յակոբոսի թղթի 4:9 տանը, «Հայտնության» 18:8 տանը և այլն խոսվում է հույսով սգի ու ողբի մասին, բայց դրանց ձևակերպումներն այլ են, իսկ ցտելն արգելված լինելու մասին նորից խոսք չկա³⁴: Մակերեսային համեմատությամբ էլ կարելի է համոզվել, որ Գր. Լուսավորչի «Հաճախապատում ճառքում» տեղ գտած անհուսությամբ լացուկոծն ու ցտելն արգելելու մասին նորմը համարյա բոլոր չափումներով զրադաշտական է՝ հին հայկական, ազգային և բոլորովին աստվածաշնչյան չէ: Օրենսդիրը նա էր և ոչ թե Մ. Մաշտոցը: Եթե այդ ճառերի հեղինակը լիներ Մաշտոցը, ապա այս նորմն էլ կլիներ աստվածաշնչյան կամ դրանց հետ ընդհանրություններ ունեցող: Զե՞ որ Աստվածաշնչի առաջին թարգմանիչներից մեկը և գլխավոր թարգմանիչը համարվում է Մաշտոցը, մինչդեռ քննարկվող նորմը այս բնույթի Աստվածաշնչյան որևէ նորմի հետ ընդհանրության եզրեր չունի: Իսկ «Հաճախապատում ճառքում» հանդիպող՝ Աստվածաշնչից արված մեջբերումներն էլ լրիվ տարբերվում են հայկական Աստվածաշնչի համապատասխան տներից:

Գր. Լուսավորիչն է եղել հայկական պետական եկեղեցու ղեկավարը, օրենսդիրը, և միայն նա կարող էր քրիստոնեական հեղափոխության ժամանակ, շրջադարձային այդ ժամանակահատվածում նման և այլ նշանակալից նորմեր սահմանել: Բացի դրանից, Գր. Լուսավորչից հետո այդ նորմը մեկ անգամ ևս վերասահմանված է եղել Ներսես Մեծի կողմից, և հինգերորդ դարում նորից նման նորմ սահմանելը ոչ միայն եղել է անհիմաստ և ուշացած, այլև անհնարին և անհարկի: Ըստ ձևի այն զրադաշտական է և դրա ընդունումը կարող էր հակասությունների տեղիք տալ, համարվել զրադաշտությանը տրված տուրք: Իսկ նման հակադրությունների տեղիք տալ Մաշտոցն անկարող էր: Նրա գործունեությունը բոլորովին այլ իմաստ է ունեցել: Ի վերջո, միայն Գրիգոր Լուսավորիչն է ունեցել հայկական երկու քաղաքակրթությունների կապն ապահովելու, ազգային ու համամարդկայինը համադրելու խնդիր և ուրիշ ոչ ոք:

"БЕЗНАДЕЖНЫЙ ПЛАЧ, СТЕНАНИЕ ПО УМЕРШИМ И ЗАПРЕТ НА НАНЕСЕНИЕ СЕБЕ ТЕЛЕСНЫХ ПОВРЕЖДЕНИЙ КАК НОРМА ДРЕВНЕАРМЯНСКОГО ПРАВА"

С. А. ХАЧАТРЯН

В статье "Безнадежный плач, стенание по умершим и запрет на нанесение себе телесных повреждений как норма древнеармянского права" доказывается, что эта запрещающая норма, нашедшая

³³ Տե՛ս Աստուածաշունչ..., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 142, 172, 360, 364, 417, 546, 605, 668:

³⁴ Տե՛ս Աստուածաշունչ..., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 6, 9, 21, 37, 53, 84, 116, 307:

свое отраженное в "Частоповторяемых речах", является, по сути, нормой зороастрийского права. Эту норму, вместе со многими другими, Григор Просветитель заимствовал из армянской зороастрийской правовой системы и внедрил в армянскую христианскую правовую систему, тем самым обеспечив связь и преемственность двух армянских правовых систем и цивилизаций.

LAMENTATION FOR THE DEAD AS OLD ARMENIAN LAW NORM

S. A. KHACHATRYAN

It is proved in the article that in "Speeches" it is essentially the norm of Zoroastrian Law. Gregory the Illuminator borrowed that and many other norms from the Zoroastrian Law and inserted them into the Christian Law which led to the continuation of civilizations and the hereditary relation of the Armenian Zoroastrian and Christian Law systems.

ԱՁԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔՈՒՄ» (ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԻՐՔԵՐԻՑ)

Ս. Ա. ԽԱՀԱՏՐՅԱՆ

*Իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

Ազատ ընտրության հարցն այն կարևոր փիլիսոփայական հիմնահարցերից է, որը հանճարեղությամբ քննարկվել և լուծվել է «Հաճախապատում ճառքում»: Ի՞նչ է նշանակում ազատ ընտրություն: Ամփոփելով այս ճառքում սփռված բազմաթիվ արժեքային դատողություններն այդ մասին՝ կարելի է եզրակացնել, որ դա նշանակում է սուբյեկտի կողմից ազատ կամքով, առանց արտաքին միջամտության ու հարկադրանքի գործողության տեսակների, դրանց միջոցների ու նպատակների միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Ընտրությունն ընկած է մարդու ազատ կամքի գործողության տեսակների, դրա նպատակների որոշման հիմքում և առանց ընտրության չկա և չի կարող լինել ազատ կամքի դրսևորում, դրա հնարավորություն: Ընտրություն կատարել՝ նշանակում է նախքան գործողություն սկսելը կողմնորոշվել երկու և ավելի ցանկությունների, նպատակների, գործողության տեսակների, ինչպես նաև նպատակներին հասնելու միջոցների և ուղիների միջև: Դա նշանակում է նախքան գործողության դիմելը՝ մարդու մտքում ծագած երկու կամ մի քանի պատճառներից ու նպատակներից որևէ մեկի ընտրություն և այդ ընթացքում որևէ արտաքին հարկադրանքի բացակայություն: Դա ենթադրում է նաև որևէ նպատակով կամ որևէ գործունեություն կատարելու դիտավորությամբ երկու և ավելի օբյեկտների միջև համեմատություն և դրանցից որևէ մեկի ընտրություն: Այն միշտ նախորդում է ազատ կամքի գործադրմանը, իսկ ազատ կամքով կատարված գործողությունը միաժա-